ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 87

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 15 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը՝

1.Ծաղկաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

3.Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին:

4. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. Ծաղկաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 84 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

7.Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

8. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9. Համայնքային սեփականություն համարվող հողամասը հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

10. Համայնքային սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով, որպես ընդլայնում օտարելու մասին:

12. Լիանա Ամիրյանին գումար վերադարձնելու մասին:

13. Ծաղկաձոր համայնքի բակային տարածքների կապիտալ վերանորոգման համաձայնություն տալու մասին:

14. Մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգման համաձայնություն մասին:

15. <<Գյումրին առանց տնակների>> հիմնադրամին գումար տրամադրելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 88-Ն

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 87-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի <<Ծաղկաձոր համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 87-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Տող1137 - Համայնքի տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքի և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար <<4200.0 թիվը, փոխարինել 5100.0 թվով>>:
2) Տող1148 Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար <<2000.0 թիվը, փոխարինել 3000.0 թվով>>:
3) Տող1352 - Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ <<17900.0 թիվը, փոխարինել 18762.6 թվով>>:
4) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) <<6516.0 թիվը փոխարինել 9891.0 թվով>>:
5) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4212 (Էներգետիկ ծառայություններ) <<1800.0 թիվը փոխարինել 1845.0 թվով>>:
6) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4221 (Ներքին գործուղումներ) <<100.0 թիվը փոխարինել 150.0 թվով>>:
7) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) <<1116.0 թիվը փոխարինել 1226.0 թվով>>:

8) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4241(Մասնագիտական ծառայություններ) <<13.7 թիվը փոխարինել 22.2 թվով>>:

9) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4252 (Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) <<1000.0 թիվը փոխարինել 1200.0 թվով>>:

10) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4261 (Գրասենյակային նյութեր և հագուստ) <<620.0 թիվը փոխարինել 1000.0 թվով>>:

11) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4264 (Տրանսպորտային նյութեր) <<2400.0 թիվը փոխարինել 2600.0 թվով>>:

12) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 4267 (Կենցաղային և հանրային սննդի նյութեր) <<150.0 թիվը փոխարինել 300.0 թվով>>:

13) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում)հոդված 5122 (Վարչական սարքավորումներ) <<2200.0 թիվը փոխարինել 2700.0 թվով>>:

14) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ)հոդված 4222 (Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) <<500.0 թիվը փոխարինել 215.0.0 թվով>>:

15) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ)հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) <<200.0 թիվը փոխարինել 0.0.0 թվով>>:

16) Բաժին 2 խումբ 5 դաս 1 (Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող))հոդված 4841 (Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում) <<3150.4 թիվը փոխարինել 0.0թվով>>:

17) Բաժին 5 խումբ 6 դաս 1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված 4212 (Էներգետիկ ծառայություններ) <<410.0 թիվը փոխարինել 415.0 թվով>>:

18) Բաժին 5 խումբ 6 դաս 1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) <<5310.0 թիվը փոխարինել 5855.0 թվով>>:

19) Բաժին 6 խումբ 4 դաս 1 (Փողոցների լուսավորում) հոդված 4212 (Էներգետիկ ծառայություններ) <<5800.0 թիվը փոխարինել 5915.0թվով>>:

20) Բաժին 6 խումբ 4 դաս 1 (Փողոցների լուսավորում) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) <<3550.0 թիվը փոխարինել 3680.0թվով>>:

21) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4261 (Գրասենյակային նյութեր և հագուստ) <<900.0 թիվը փոխարինել 1400.0թվով>>:

22) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) <<1570.0 թիվը փոխարինել 1370.0թվով>>:

23) Բաժին 8 խումբ 4դաս 2 (Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ) հոդված 4819 (Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) <<300.0 թիվը փոխարինել 560.0թվով>>:

24) Բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) <<28400.0 թիվը փոխարինել 30100.0թվով>>:

25) Բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) հոդված 5122 (Վարչական սարքավորումներ) <<3000.0 թիվը փոխարինել 2500.0թվով>>:

26) Բաժին 9 խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) <<13140.0 թիվը փոխարինել 12070.0թվով>>:

27) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված 4891 (Պահուստային միջոցներ) <<105.5 թիվը փոխարինել 0.0 թվով>>:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՐԱ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *03001885*

ՏԵՂԵԿԱՆՔ

Ծաղկաձոր համայնքում անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել բացիկներ, օրացույցներ, որի հետևանքով << Հանգստի և սպորտի ծառայություններ>> ծրագրում կատարվում է համապատասխան փոփոխություններ:

Անհրաժեշտություն է առաջացել նաև գումարներ հատկացնել <<Էներգետիկ ծառայություններ>>, <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> ծառայություններն իրականացնելու, ինչպես նաև տրանսպորտային և գրասենյակային նյութեր ձեռք բերելու համար: Այդ գումարի 105.5 հազ. դրամը հատկացվում է պահուստային ֆոնդից:

Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի, <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> և <<Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ների աշխատակիցներին պարգևատրելու համար << Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>>, <<Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)>>, <<Փողոցների լուսավորում>>, << Նախադպրոցական կրթություն>>, << Արտադպրոցական դաստիարակություն>> ծրագրերում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

Բյուջեի եկամտային մասում՝
<<Համայնքի տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքի և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար>> տողը սահմանել 5100.0 հազ. դրամ:
<<Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար>> տողը սահմանել 3000.0 հազ. դրամ:
<< Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ >> տողը սահմանել 18762.6 հազ. դրամ :

2018 թվականի Ծաղկաձոր համայնքի հաստատված բյուջեն՝1675414.1 հազ, դրամ, ավելանում է 2762.6 հազ. դրամով, ճշտված բյուջեն կազմում է 170306.7 հազ. դրամ::

Գլխավոր մասնագետ Ն. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 89-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Ծաղկաձոր համայնքի տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Սահմանել 2019 թվականի ընթացքում Ծաղկաձոր համայնքի կողմից մատուցվող նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը և արտոնությունները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՇՈՒՎԱԿԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 07-ի
թիվ 89-Ն որոշման

Ծաղկաձոր համայնքի

Տեղական տուրքերի և վճարների 2019թ. դրույքաչափերը

I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

բ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

գ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

դ) 3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000 դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության պահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200.000 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղում վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60000 դրամ:

6 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ,

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25 000 դրամ,

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45 000 դրամ,

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100 000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ,

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25 000 դրամ,

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45 000 դրամ,

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100 000 դրամ:

8. Իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 525 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 75.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 150.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 500.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 1.500.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 750.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 225.000 դրամ:/

10. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում.

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 000 դրամ,

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20 000 դրամ,

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30 000 դրամ,

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50 000 դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում .

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 2 000 դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 000 դրամ,

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8 000 դրամ,

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 000 դրամ,

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25 000 դրամ:

11. Համաքաղաքային կանոններին համապատասխան՝ համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ,

12. Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ 700 դրամ.

5) արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր ամսվա համար մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

6) Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

13. Համայնքի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանվում է 100.000 դրամ:

14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու համար տեղական տուրքը ընթացիկ տարում մեկ մեքենայի համար սահմանվում է 10000 դրամ:

15. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվ'ս համար սահմանվում է 500000 դրամ/

16. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար:

1)3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

4)10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:>>

17.Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ 1 օրացուցային տարվա համար 80 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝

1) մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40.000 դրամ,
2)101-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 80.000 դրամ,
3) 501-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 160.000 դրամ,
4) 1501 քառակուսի մետր և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 250.000 դրամ,

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը , վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15 000 դրամ

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
1) մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000
2) 200-ից մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000
3) 300-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 70000
4) 500 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000

4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

1) մինչև 1000 քմ.՝ 1000

2) 1001-5000 քմ. ՝ 5000

3) 5001-10000 քմ.՝ 10000

4) 10001 և ավելի քմ.՝ 15000

5. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝

1) մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

2) 501-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ 20.000 դրամ, գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 25 դրամ,

3) 1501 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար՝ 40.000 դրամ, գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ:

6. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվող վճարը սահմանել 40.000 դրամ:

7. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել՝

1) բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝

ա) համայնքում անձնագրային հաշվառման կանոններով՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 150 դրամ,

բ) բնակելի շինության կամ բնակարանի մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսական 15 դրամ.

2) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և /կամ/ շինություններում ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

ա) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 60 դրամ,

բ) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 35 դրամ,

գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ.

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 5 դրամ:

ե) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

3) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա) մեկ խորանարդ մետրի համար՝ 3000 դրամ

բ) մեկ տոննա աղբի համար՝ 10000 դրամ.

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճարը սահմանել կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ յուրաքանչյուր մեկ խորանարդի համար 600 դրամ, մեկ տոննա աղբի համար՝ 2000 դրամ:

9. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար սահմանվում է տեղական վճար՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 դրամ,
2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 500 դրամ,
3) մեկ շաբաթվա համար՝ մինչև 1500 դրամ ներառյալ.
4) մեկ ամսվա համար՝ մինչև 20000 դրամ ներառյալ.
5) մեկ տարվա համար՝ մինչև 70000 դրամ ներառյալ:

10. Համայնքի ստրխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը մեկ փաստաթղթի համար սահմանվում է 500 դրամ:

Հավելված 2
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 07-ի
թիվ 89-Ն որոշման

<<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը սահմանել ամսական 3000 դրամ:

1)Ծաղկաձոր քաղաքում հաշվառում չունեցող մեկ երեխայի համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը սահմանել 8000 դրամ:

2) Նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի երեխաների հաճախելու դեպքում երկրորդ և հաջորդ երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը սահմանել ամսեկան 1500 դրամ:

<<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը սահմանել՝

N	Բաժիններ	Փոխհատուցման գումարի դրույքաչափը (դրամ)
1.	Դաշնամուրի ուսուցում	2500
2.	Վոկալի ուսուցում	2500
3.	Ժողովրդական գործիքներ	Չի փոխհատուցվում
4.	Պարարվեստի ուսուցում	2 000
6.	Կերպարվեստի ուսուցում	1500
7.	Դիզայներության, կար ու ձևի ուսուցում	1000

1) Նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի երեխաների հաճախելու և (կամ)նույն երեխայի՝ մեկից ավելի խմբակներ հաճախելու դեպքում գանձման ենթակա վճարները զեղչվում են 50 տոկոսի չափով:

2) Ծաղկաձոր համայնքում հաշվառում չունեցող երեխաների համար սույն Հավելվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 1.5 գործակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 90

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել 290.000 (երկու հարյուր իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 91

ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 7-ի
թիվ 91 որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՒՄ Է

Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում

1. Ներքին աուդիտի բաժին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 7-ի
թիվ 91 որոշման

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 23
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	290000			290000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	230000			230000
3		Համայնքի ղեկավարի օգնական	Հայեցողական	-	1	194000			194000
4		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	227000			227000
5		Ներքին աուդիտի բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-2	1	220000			220000
6		Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-1	1	220000		6600	226600
7		Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-2	1	220000			220000
8		Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-3	1	220000			220000
9		Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-4	1	220000		6600	226600
10		Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-5	1	220000			220000
11		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	185000			185000
12		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-2	1	185000			185000
13		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-3	1	185000			185000
14		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-4	1	185000			185000

15		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-6	1	185000		5550	190550
16		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	165000			165000
17		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-2	1	165000			165000
18		Գործավար	Տեխնիկական սպասարկման		1	150000			150000
19		Վարորդ	Տեխնիկական սպասարկման		3	150000			450000
20		Տնտեսվար	Տեխնիկական սպասարկման		1	150000			150000
21		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	100000			100000
	Ընդամենը				23		0	18750	4384750

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 92

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29 հրամանով և "Նախադպրոցական կրթության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -3 Դեմ -2 Ձեռնպահ - 0

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Ծաղկաձոր համայնքի
ավագանու 2018
թվականի դեկտեմբերի 7-
ի թիվ 92 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔ, ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 22
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	"Ծաղկաձորի ՆՈՒՀ" ՀՈԱԿ	տնօրեն		-	1	100800			100800
2		Մեթոդիստ, ուս.գծով տնօրենի տեղակալ			0.5	85000			42500
3		գլխավոր հաշվապահ			1	85000			85000
4		դաստիարակ			3.36	85000			285600
5		դաստիարակի օգնական			3	80000			240000
6		հոգեբան			1	80000			80000
7		երաժշտության դաստիարակ			0.75	80000			60000
8		պարուսույց			0.25	80000			20000
9		կերպարվեստի ուսուցիչ			1	80000			80000
10		ֆիզկուլտուրայի հրահանգիչ			0.5	80000			40000
11		փոխարինող աշխատակից			0.5	80000			40000
12		փոխարինող աշխատակից			0.5	80000			40000
13		դերձակ			0.5	80000			40000
14		բուժքույր			1	80000			80000

15		տնտեսվար			1	80000			80000
16		լվացարար- հավաքարար			1	80000			80000
17		խոհարար			1	80000			80000
18		խոհարարի օգնական			0.5	80000			40000
19		օժանդակ բանվոր			0.5	80000			40000
20		դռնապան			1	80000			80000
21		հնոցապան			1	80000			80000
22		պահակ			1	80000			80000
		Ընդամենը			22				1793900

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2
Ծաղկաձոր համայնքի
ավագանու 2018
թվականի դեկտեմբերի 7-
ի թիվ 92 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	"Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց" ՀՈԱԿ	տնօրեն		-	1	85000			85000
2		տեսական առարկաների ուսուցիչ			2	80000			160000
3		գլխավոր հաշվապահ			1	80000			80000
4		դաշնամուրի ուսուցիչ			2	80000			240000
5		կերպարվեստի ուսուցիչ			1	80000			80000
6		պարի խմբավար			1	80000			80000
7		մոդելավորման, դիզայնի ուսուցիչ			1	80000			80000
8		վոկալի ուսուցիչ			2	80000			160000
9		շվի-դուդուկի ուսուցիչ			1	80000			80000
10		հավաքարար			1	80000			80000
		Ընդամենը			13				1125000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3
Ծաղկաձոր համայնքի
ավագանու 2018
թվականի դեկտեմբերի 7-
ի թիվ 92 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 22
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	"Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն" ՀՈԱԿ	տնօրեն		-	1	185000			185000
2		գլխավոր հաշվապահ			1	135000			135000
3		հաշվ. գանձապահ			1	120000			120000
4		ճարտարագետ			1	120000			120000
5		վարորդ			4	135000			540000
6		բանվոր			3	135000			405000
7		հավաքարար			5	110000			550000
8		պահակ			3	100000			300000
9		գրեյդերավար, մեխանիկ			1	199,500			199500
10		գրեյդերավար			1	133,000			133000
11		անտառապահ			1	100,000			100000
		Ընդամենը			22				2787500

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 93

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի <<Համայնքային սեփականություն համարվող հողամասը փոխանակելու մասին>> թիվ 84 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման նախաբանը լրացնել <<Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ և հիմք ընդունելով Ռոզա Ասլիբեկի Մաթևոսյանի դիմումը՝ >> բառերով:

2) որոշման 1-ին կետը լրացնել <<հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով>> բառերով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 94

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասը՝

Հողամասի հասցեն	Չափը	Նպատակային և գործառնական նշանակությունը	Կադաստրային ծածկագիրը	Մեկնարկային գինը
ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ40/6	0,2 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0030-0085	9048000 Հ Հ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎՍԿԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 95

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 186-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի Մայիսյան փողոց թիվ 25/2 հասցեում գտնվող, 0,0065 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ *03001885*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 96

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 [1] հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մրցութային կարգով կառուցապատման իրավունքով 40 տարի ժամկետով օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն համարվող, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 6-րդ փակուղի, թիվ 9 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0,2 հա մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0022-0538/ :

2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային չափ սահմանել 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 97

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող <<Core 3 HDD 1 TV>> համակարգիչն անհատույց օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 98

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 3-րդ և 7-րդ կետերով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գառնիկ Արշալույսի Կարապետյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց թիվ 25 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07122018-07-0043) 0.04 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասին և հողամասի վրա ամրակայված 71,09 ք.մ. մակերեսով բնակելի տանը կից՝ քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 25/2 հասցեում գտնվող, և քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 25/3 հասցեում գտնվող, 0,0155 հա ընդհանուր մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասերը:
2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 701 220 (յոթ հարյուր մեկ հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 99

ԼԻԱՆԱ ԱՄԻՐՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Լիանա Ամիրյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Լիանա Ամիրյանին վերադարձնել 900125002213 հաշվեհամարին սխալմամբ վճարված 35500 /երեսունհինգ հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 100

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնքի բակային տարածքների կապիտալ վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքների կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԶ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *03001885* ԿՈՏԱՅՔ ՀՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 101

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ մանկապարտեզի շենքի և հարակից տարածքի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբեր 2018 թվականի թիվ 102

<<ԳՅՈՒՄՐԻՆ ԱՌԱՆՑ ՏՆԱԿՆԵՐԻ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու դեկտեմբերի 22-ի թիվ 87-Ն որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. <<Գյումրին առանց տնակների>> հիմնադրամին տրամադրել դրամական աջակցություն՝ 60 000 /վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ 03001885